**Հավելված 4**
**«ՀԳՊԱ-ԷԱՃԱՊՁԲ-18/10» ծածկագրով**
**Էլեկտրոնային աճուրդի հրավերի**

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀԳՊԱ-ԷԱՃԱՊՁԲ-18/10-3

ք.Երևան 08/11/2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ ՀԻՄՆԱԴՐԱՄ-ը ի դեմս Արամ Իսաբեկյան-ի, որը գործում է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ ՀԻՄՆԱԴՐԱՄ -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և ԱՐՄԱՆ ԿԱԴԱԼՅԱՆ ՎԱԼԵՐԻԻ Ա/Ձ-ը, ի դեմս տնօրեն Արման Կադալյան-ի, որը գործում է ԱՐՄԱՆ ԿԱԴԱԼՅԱՆ ՎԱԼԵՐԻԻ Ա/Ձ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու

պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:
2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝
ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.
բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.
գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:
2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:
2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:
2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.
2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝
ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.
բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,
2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:
2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:
2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:
2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:
2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին

հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 106700.00 (հարյուր վեց հազար յոթ հարյուր ) ՀՀ դրամ : Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող

շահույթը:
Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:
3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:
Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):
5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:
5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է

նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից այն ստորագրելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[1]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով

այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է __ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

---

[1]Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Հասցե՝ ք. Երևան, Իսահակյան 36
Այդի Բանկ ՓԲԸ
11815000774800
01505555
Արամ Իսաբեկյան

__________
/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by BARSEGHYAN GOHAR 6001560513
Date: 2018.12.12 12:53:56 GMT+04:00

ՎԱՃԱՌՈՂ
ԱՐՄԱՆ ԿԱԴԱԼՅԱՆ ՎԱԼԵՐԻԻ Ա/Ձ
Հասցե՝ ք. Երևան, Ավանեսովի 26 փ. 10
«Ամերիաբանկ» ՓԲԸ
1570032132510100
81832425
Արման Կադալյան

__________
/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by KADALYAN ARMAN 3512850227
Date: 2018.11.04 17:26:02 AMT

Հավելված N 1
08/11/2018թ. կնքված
ՀԳՊԱ-ԷԱՃԱՊՁԲ-18/10 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| 4 | 30192220/1 | պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 19մմx36մ գրասենյակային, փոքր | պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 19ÙÙx36Ù գրասենյակային փոքր Կցված է 09483b3b.pdf | հատ | 205.80 | 10290.00 | 50 | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
| | | | | | | | | ք. Երևան, Իսահակյան 36 | 50 | 10.12.2018թ. |
| 5 | 30192121/1 | գրիչ | գրիչ | հատ | 57.13 | 8570.00 | 150 | հասցեն | ենթակա | ժամկետը |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | գնդիկավոր | գնդիկավոր, ռետինե բռնակով, թափանցիկ կորպուսով, կապույտ-130, սև -20 Կցված է ee083e82.pdf | | | | | | քանակը | |
| | | | | | | | | ք. Երևան, Իսահակյան 36 | 150 | 10.12.2018թ. |
| 6 | 30192128/1 | գրիչ գելային | գրիչ սև, 0.5 մմ ծայրով Կցված է 77676472.pdf | հատ | 98.66 | 14800.00 | 150 | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
| | | | | | | | | ք. Երևան, Իսահակյան 36 | 150 | 10.12.2018թ. |
| 10 | 30199430/2 | թուղթ նշումների, տրցակներով | թերթիկներ նշումների համար տակդիրով, 90մմ x 90մմ, 900 հատ Կցված է f8a0fba5.pdf | հատ | 998.00 | 49900.00 | 50 | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
| | | | | | | | | ք. Երևան, Իսահակյան 36 | 50 | 10.12.2018թ. |
| 13 | 30197332/1 | դակիչ միջին | դակիչ քանոնով, 40-45 էջի | հատ | 3480.00 | 17400.00 | 5 | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
| | | | | | | | | ք. Երևան, | 5 | 10.12.2018թ. |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | համար Կցված է facdffa4.pdf | | | | | Իսահակյան 36 | | |
| 15 | 30197120/1 | կոճգամներ | գունավոր մեխիկ, պլաստմասե գլխիկով Կցված է 6c1c84b8.pdf | տուփ | 287.00 | 5740.00 | 20 | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| | | | | | | | | ք. Երևան, Իսահակյան 36 | 20 | 10.12.2018թ. |

* մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

**ԳՆՈՐԴ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ ՀԻՄՆԱԴՐԱՄ**

**Հասցե՝ ք. Երևան, Իսահակյան 36**

**Այդի Բանկ ՓԲԸ**

**11815000774800**

**01505555**

Digitally signed by BARSEGHYAN GOHAR 6001560513
Date: 2018.12.12 12:54:24 GMT+04:00

**Արամ Իսաբեկյան**

____________

**/ստորագրություն/**

**Կ.Տ**

**ՎԱՃԱՌՈՂ**

**ԱՐՄԱՆ ԿԱԴԱԼՅԱՆ ՎԱԼԵՐԻԻ Ա/Ձ**

**Հասցե՝ ք. Երևան, Ավանեսովի 26 փ. 10**

**«Ամերիաբանկ» ՓԲԸ**

**1570032132510100**

**81832425**

**Արման Կադալյան**

____________

**/ստորագրություն/**

**Կ.Տ**

Digitally signed by KADALYAN ARMAN 3512850227
Date: 2018.11.04 17:28:28 AMT

Հավելված N 2
08/ 11 /2018թ. կնքված
ՀԳՊԱ-ԷԱՃԱՊՁԲ-18/10 ծածկագրով պայմանագրի

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ***

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018-ին` ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | | |
| | | | Հնվ. | Փտր. | Մրտ. | Ապր. | Մայ. | Հուն. | Հուլ. | Օգս. | Սեպ. | Հոկ. | Նոյ. | Դեկ. | Ընդամենը |
| 4 | 30192220/1 | պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 19մմx36մ գրասենյակային, փոքր | | | | | | | | | | | 5145.00 | 10290.00 | 10290.00 |
| 5 | 30192121/1 | գրիչ գնդիկավոր | | | | | | | | | | | 4285.00 | 8570.00 | 8570.00 |
| 6 | 30192128/1 | գրիչ գելային | | | | | | | | | | | 7400.0 | 14800. | 14800. |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | | 0 | 00 | 00 |
| 10 | 30199430/2 | թուղթ նշումների, տրցակներով | | | | | | | | | | | 24950.00 | 49900.00 | 49900.00 |
| 13 | 30197332/1 | դակիչ միջին | | | | | | | | | | | 8700.00 | 17400.00 | 17400.00 |
| 15 | 30197120/1 | կոճգամներ | | | | | | | | | | | 2870.00 | 5740.00 | 5740.00 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

** իրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

**ԳՆՈՐԴ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ ՀԻՄՆԱԴՐԱՄ**

**Հասցե՝ ք. Երևան, Իսահակյան 36**

**ԱյԴի Բանկ ՓԲԸ**

**11815000774800**

**01505555**

**Արամ Իսաբեկյան**

Digitally signed by BARSEGHYAN GOHAR 6001560513
Date: 2018.12.12 12:54:52 GMT+04:00

**/ստորագրություն/**

**Կ.Տ**

**ՎԱՃԱՌՈՂ**

**ԱՐՄԱՆ ԿԱԴԱԼՅԱՆ ՎԱԼԵՐԻԻ Ա/Ձ**

**Հասցե՝ ք. Երևան, Ավանեսովի 26 փ. 10**

**«Ամերիաբանկ» ՓԲԸ**

**1570032132510100**

**81832425**

**Արման Կադալյան**

**/ստորագրություն/**

**Կ.Տ**

Digitally signed by KADALYAN ARMAN 3512850227
Date: 2018.11.04 17:28:55 AMT

*Հավելված 3.1*
*«08» նոյեմբերի 2018թ. կնքված*
*ՀԳԳԱ-ԷԱՃԱՊՁԲ-18/10-3 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N 002

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ ՀԻՄՆԱԴՐԱՄ -ի (այսուհետ՝ Գնորդ) և ԱՐՄԱՆ ԿԱԴԱԼՅԱՆ ՎԱԼԵՐԻԻ Ա/Ձ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2018թ. նոյեմբերի 08-ին կնքված N ՀԳԳԱ-ԷԱՃԱՊՁԲ-18/10-3 պայմանագրի շրջանակներում Վաճառողը 2018թ. դեկտեմբերի 10-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 19մմx36մ գրասենյակային, փոքր | հատ | 50 |
| գրիչ գնդիկավոր | հատ | 150 |
| գրիչ գելային | հատ | 150 |
| դակիչ միջին | հատ | 5 |
| կոճգամներ | հատ | 20 |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

ազգանուն, անուն

ստորագրություն

**Ընդունեց**

հայտը նախագծած ստորաբաժանման ներկայացուցիչ

ազգանուն, անուն

ստորագրություն

08/11/2018թ. կնքված N ՀԳՊԱ-ԷԱՃԱՊՁԲ-18/10/3
ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ
ԱՐՄԱՆ ԿԱԴԱՅԱՆ ՎԱԼԵՐԻԻ Ա/Ձ
գտնվելու վայրը՝ ք. Երևան, Ավանեսովի 26 փ. 10
հհ՝ 1570032132510100
հվհհ՝ 81832425

Պատվիրատու
«Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամ
գտնվելու վայրը՝ ք. Երևան, Իսահակյան 36
հհ՝ 11815000774800
հվհհ՝ 01505555

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 002
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ՀԳՊԱ-ԷԱՃԱՊՁԲ-18/10/3:
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ 08/11/2018թ
Պայմանագրի համարը՝ ՀԳՊԱ-ԷԱՃԱՊՁԲ-18/10/3
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ 10/12/2018թ. դուրս գրված N Բ 1502196100 հաշիվ ապրանքագիրը կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը / հազար դրամ/ | Վճարման ժամկետը / ըստ ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 1 | պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 19մմx36մ գրասենյակային, փոքր | պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 19ÙÙx36Ù գրասենյակային փոքր | 50.00 | 50.00 | 10/12/2018 | 10/12/2018 | 10.290 | 27/12/2018 |
| 2 | գրիչ գնդիկավոր | գրիչ գնդիկավոր, սեղմնակ բռնակով, թափանցիկ կորպուսով, կապույտ-130, սև -20 | 150.00 | 150.00 | 10/12/2018 | 10/12/2018 | 8.570 | 27/12/2018 |
| 3 | գրիչ գելային | գրիչ սև , 0.5 մմ ծայրով | 150.00 | 150.00 | 10/12/2018 | 10/12/2018 | 14.800 | 27/12/2018 |
| 4 | դակիչ միջին | դակիչ քանոնով, 40-45 էջի համար | 5.00 | 5.00 | 10/12/2018 | 10/12/2018 | 17.400 | 27/12/2018 |
| 5 | կոճգամներ | գունավոր մեխիկ, պլաստմասե գլխիկով | 20.00 | 20.00 | 10/12/2018 | 10/12/2018 | 5.740 | 27/12/2018 |

### ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

Digitally signed by KADALYAN ARMAN 3512850227
Date: 2018.12.10 18:12:09 AMT

Ծառայությունը ընդունեց

Digitally signed by BARSEGHYAN GOHAR 6001560513
Date: 2018.12.12 13:45:53 GMT+04:00

# Հաշիվ վավերագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 10 | Դեկտեմբեր | 2018 թ. |
| [4] Առաքման ամսաթիվ | | |
| 10 | Դեկտեմբեր | 2018 թ. |

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Բ | 1502196100 |
| Ճշգրտվող հաշիվ վավերագրի | |
| Սերիա | Համար |
| | |
| Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ | |
| | |

| Պայմանագիր | |
|---|---|
| [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
| 8 Նոյեմբեր, 2018 թ. | ՀԳՊԱ-ԷԱՃԱՊՁԲ-18/10/3 |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

## Արտադրանք, ապրանք առաքող անձի

| | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 8 1 8 3 2 4 2 5 |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [10] Անվանումը | ԱՐՄԱՆ ԿԱԴԱՅԱՆ Անհատ ձեռնարկատեր (ԱՁ) |
| [11] Բանկային տվյալները | «Ամերիաբանկ» ՓԲԸ — N 15700 32132510100 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ԷՐԵԲՈՒՆԻ ԷՐԵԲՈՒՆԻ ԹԱՂԱՄԱՍԱՎԱՆԵՍՈՎԻ Փ. 26 10 |
| [13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են | ԵՐԵՎԱՆ ԷՐԵԲՈՒՆԻ ԷՐԵԲՈՒՆԻ ԹԱՂԱՄԱՍԱՎԱՆԵՍՈՎԻ Փ. 26 10 |
| [14] Լրացուցիչ տվյալներ | |

## Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի

| | |
|---|---|
| [15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 1 5 0 5 5 5 5 |
| [16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 1 5 0 5 5 5 5 / 1 |
| [17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը) | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» ՀԻՄՆԱԴՐԱՄ Հիմնադրամ |
| [18] Բանկային տվյալները | N 11815000774800 |
| [19] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ԻՍԱՀԱԿՅԱՆ 36 |
| [20] Լրացուցիչ տվյալներ | |

| [21] Ում միջոցով | | |
|---|---|---|
| | Անուն, ազգանուն | |
| Լիազորագիր | Համար | |
| | Ամսաթիվ | |

| | |
|---|---|
| [22] Մատակարարման (առաքման) եղանակը | |
| [23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | ք. Երևան, Իսահակյան 36 |

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | Այդ թվում՝ բնապ. հարկ | Այդ թվում՝ ակցիզ. հարկի գումար |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն 19մմx36մ գրասենյակային, փոքր | հատ | 50 | 205.8 | | 10290 | | |
| 2 | Գրիչ գնդիկավոր | հատ | 150 | 57.1333 | | 8569.99 | | |
| 3 | Գրիչ գելային | հատ | 150 | 98.6667 | | 14800.01 | | |
| 4 | Դանակ միջին | հատ | 5 | 3480 | | 17400 | | |
| 5 | Կոճգամներ | հատ | 20 | 287 | | 5740 | | |
| Ընդամենը | | | | | | 56800 | | |

Առաքող՝ YESAYAN VARDAN 2211900828 (անունը, ազգանունը)

Ստացող BARSEGHYAN GOHAR 6001560513 (անունը, ազգանունը)

10/12/2018 10:23:54

13/12/2018 12:19:13

08/11/2018թ. կնքված N ՀԳՊԱ-ԷԱՃԱՊՁԲ-18/10/3
ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ
ԱՐՄԱՆ ԿԱԴԱԼՅԱՆ ՎԱՀԵՐԻ Ա/Ձ
գտնվելու վայրը՝ ք. Երևան, Ավանեսովի 26 փ. 10
հհ՝ 1570032132510100
հվհհ՝ 81832425

Պատվիրատու
«Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամ
գտնվելու վայրը՝ ք. Երևան, Իսահակյան 36
հհ՝ 11815000774800
հվհհ՝ 01505555

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 003
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ՀԳՊԱ-ԷԱՃԱՊՁԲ-18/10/3:
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ 08/11/2018թ
Պայմանագրի համարը՝ ՀԳՊԱ-ԷԱՃԱՊՁԲ-18/10/3
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ 21/12/2018թ. դուրս գրված N --- հաշիվ ապրանքագիրը կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների | | | | | | Վճարման ենթակա գումարը / հազար դրամ/ | Վճարման ժամկետը / ըստ ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 1 | թուղթ նշումների, կպցուկներով | թերթիկներ նշումների համար կպչելիով, 90մմ x 90մմ, 900 հատ | 50.00 | 50.00 | 10/12/2018 | 21/12/2018 | 49.900 | 28/12/2018 |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

Ծառայությունը ընդունեց

# Հաշիվ վավերագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 21 | Դեկտեմբեր | 2018 թ. |
| [4] Առաքման ամսաթիվ | | |
| 21 | Դեկտեմբեր | 2018 թ. |

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Բ | 3674210833 |
| Ճշգրտվող հաշիվ վավերագրի | |
| Սերիա | Համար |
| | |
| Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ | |
| | |

| Պայմանագիր | |
|---|---|
| [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
| 8 Նոյեմբեր, 2018 թ. | ՀԳՊԱ-ԷԱՃԱՊՁԲ-18/10/3 |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

## Արտադրանք, ապրանք առաքող անձի

| | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 8 1 8 3 2 4 2 5 |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [10] Անվանումը | ԱՐՄԱՆ ԿԱԴԱԼՅԱՆ Անհատ ձեռնարկատեր (ԱՁ) |
| [11] Բանկային տվյալները | «Ամերիաբանկ» ՓԲԸ N 15700 32132510100 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ԷՐԵԲՈՒՆԻ ԷՐԵԲՈՒՆԻ ԹԱՂԱՄԱՍԱՎԱՆԵՍՈՎԻ Փ. 26 10 |
| [13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են | ԵՐԵՎԱՆ ԷՐԵԲՈՒՆԻ ԷՐԵԲՈՒՆԻ ԹԱՂԱՄԱՍԱՎԱՆԵՍՈՎԻ Փ. 26 10 |
| [14] Լրացուցիչ տվյալներ | |

## Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի

| | |
|---|---|
| [15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 1 5 0 5 5 5 5 |
| [16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 1 5 0 5 5 5 5 / 1 |
| [17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը) | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» ՀԻՄՆԱԴՐԱՄ Հիմնադրամ |
| [18] Բանկային տվյալները | N 11815000774800 |
| [19] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ԻՍԱՀԱԿՅԱՆ 36 |
| [20] Լրացուցիչ տվյալներ | |

| [21] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | |
|---|---|---|---|
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | |

| | |
|---|---|
| [22] Մատակարարման (առաքման) եղանակը | |
| [23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | ք. Երևան, Իսահակյան 36 |

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | Այդ թվում՝ ակցիզային հարկ | Այդ թվում՝ ավելացված արժեքի հարկ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Թուղթ նշումների, տրցակներով | հատ | 50 | 998 | | 49900 | | |
| Ընդամենը | | | | | | 49900 | | |

Առաքող՝ YESAYAN VARDAN 2211900828
(անունը, ազգանունը)

Ստացող BARSEGHYAN GOHAR 6001560513
(անունը, ազգանունը)

21/12/2018 12:28:42

24/12/2018 10:54:09

1000

08/11/2018թ. կնքված N ՀԳՊԱ-ԷԱՃԱՊՁԲ-18/10/3
ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ
ԱՐՄԱՆ ԿԱԴԱԼՅԱՆ ՎԱԼԵՐԻԻ Ա/Ձ
գտնվելու վայրը՝ ք. Երևան, Ավանեսովի 26 փ. 10
հհ՝ 1570032132510100
հվհհ՝ 81832425

Պատվիրատու
«Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամ
գտնվելու վայրը՝ ք. Երևան, Իսահակյան 36
հհ՝ 11815000774800
հվհհ՝ 01505555

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 003
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ՀԳՊԱ-ԷԱՃԱՊՁԲ-18/10/3:
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ 08/11/2018թ
Պայմանագրի համարը՝ ՀԳՊԱ-ԷԱՃԱՊՁԲ-18/10/3
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ 21/12/2018թ. դուրս գրված N Բ3674210833 հաշիվ ապրանքագիրը կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը / հազար դրամ/ | Վճարման ժամկետը / ըստ ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 1 | թուղթ նշումների, տրցակներով | թերթիկներ նշումների համար սոսնձվող, 90մմ x 90մմ, 900 հատ | 50.00 | 50.00 | 10/12/2018 | 21/12/2018 | 49.900 | 28/12/2018 |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

Ծառայությունը ընդունեց

Digitally signed by KADALYAN ARMAN
3512850227
Date: 2018.12.21 18:55:13 AMT

Digitally signed by BARSEGHYAN GOHAR
6001560513